


ԼԻԲԱՆԱՆԻ ՈՍԿԵԶՕԾ ԴԻՐՔԸ

Ոսկիի համաշխարհային խորհուրդը իր նորագոյն զեկոյցին մեջ բացայայտեց, թե ոսկիի պաշարի ոլորտին մեջ Լիբանան կը գրաւէ արաբական երկիրներուն երկրորդ դիրքը, մինչ Սեւտական Արաբիա առաջատարն է, շուրջ 323 թոն ոսկիի պաշարով: Ըստ զեկոյցին, Լիբանանի մեջ կայ շուրջ 287 թոն ոսկի, իսկ Ալճերիա երրորդ է՝ 174 թոն, Իրաք՝ 4-րդ, Լիպիա՝ 5-րդ, Եգիպտոս՝ 6-րդ եւ Քաթար՝ 7-րդ:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԻ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Այսօր կէսօրուան ժամը 11-ին Պապատայի նախագահական պալատը առաջին անգամ ըլլալով պիտի հիւրընկալէ վարչապետ Նաուաֆ Սալամի վարչապետած նորակազմ կառավարութեան անդամները, որոնք հանրապետութեան նախագահ ժողովի Աունի գլխաւորութեամբ պիտի գումարեն



անդրանիկ նիստ մը եւ սկսին քննարկել կառավարութեան աշխատանքային ծրագիրը, որուն հիման վրայ յառաջիկային պիտի ուղղուին Նըժմէ հրապարակ ստանալու խորհրդարանին վստահութիւնը:

Ինչպէս կը նախատեսուի, նախագահ Աունի պաշտօնավարութեան ժամանակաշրջանի առաջին կառավարութիւնը լիբանանեան չափանիշերով համեմատաբար արագ կազմուեցաւ եւ յայտարարուեցաւ Շաբաթ, 8 Փետրուարին, Պապատայի պալատին մէջ հանրապետութեան նախագահին եւ վարչապետին տեսակցութենէն ետք, որոնց աւելի ուշ միացաւ նաեւ խորհրդարանի նախագահը: Ուստի, վարչապետութեան ընդհանուր քարտուղար Մահմուտ Մեքիէ յայտարարեց 24 նախարարներէ բաղկացած կառավարութեան անուանացանկը, որուն մաս կազմեց մէկ հայ դոկտ. Նորա Պայրազտարեանը, որ ստանձնեց Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութիւնը:

Կառավարութեան կազմութենէն ետք, վարչապետ Սալամ Պապատայի պալատէն մտղեց, որ այս ըլլալ բարեկարգումի եւ փրկութեան կառավարութիւն մը, որովհետեւ «բարեկարգումը միակ միջոցն է փրկելու Լիբանանը եւ ամրապնդելու անվտանգութիւնն ու կայունութիւնը՝ ամբողջացնելով 1701 բանաձեւին գործադրութիւնը»: Ըստ Սալամի, կառավարութիւնը պիտի ձգտի վերականգնելու վստահութիւնը քաղաքացիներուն եւ պետութեան միջեւ՝ իրականացնելով երիտասարդութեան իղծերը: Վարչապետը ընդգծեց ելեւնտա-



կան եւ տնտեսական բարեկարգումներու իրականացումը, կարելորելով դատական համակարգին անկախ աշխատանքը: Նախարարներու բազմազանութեան երեւոյթը պիտի չըլլայ խափանումի պատճառ կամ անձնական նեղ շահերու հրապարակ, այլ՝ նախարարները պիտի գործեն ներդաշնակութեամբ: ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուրբեսու ողջունեց Լիբանանի նոր կառավարութեան կազմութիւնը եւ յանձնառութիւն յայտնեց Լիբանանի գերիշխանութեան եւ անվտանգութեան պահպանումին, կոչ ուղղելով գործադրելու ՄԱԿ-ի 1701 բանաձեւին բոլոր յօդուածները:

ԸՐՄԵԼԻ ՍԱՇՄԱՆԸ ԱՊԱՇՆՎԱԿԱՆ ՆՈՐ ԳԼԽԱՑԱԻ

Լիբանանի նորակազմ կառավարութեան առջեւ ցցուած բազում մարտահրաւերներուն շարքին ամենէն հրատապն է ապահովական թղթածրարը, որ վերջին օրերու զարգացումներուն լոյսին տակ այլեւս չի սահմանափակուիր երկրի հարաւային շրջաններուն մէջ, այլ հասած է Լիբանան ծայրագոյն հիւսիս-արեւելք՝ Սուրիոյ հետ շրջմէլ գաւառի սահմանները:




Նային գօտի, ուր շաբաթավերջին յաւելեալ բախումներ գրանցուեցան մէկ կողմէ սուրիացի զինեալ կազմակերպութիւններու, միւս կողմէ լիբանանեան ցեղախմբերու զինեալներուն միջեւ, պատճառելով մարդկային կորուստ եւ նիւթական ծանր վնաս: Շաբաթ օր, սուրիական կողմէն գործի լծուեցան նաեւ հրետանին եւ հրթիռային համակարգերը, որոնք կրակ տեղացուցին լիբանանեան սահմանները գիւղերուն վրայ: Շուտով, նախագահ Աունի ցուցմունքներով հիւսիսային Պեքաս հասան լիբանանեան բանակի հրետանաւորները եւ հակադարձեցին սուրիացի զինեալներու կրակակէտերուն, համեմատաբար հանդարտեցնելով իրավիճակը:

ՄԵԿ ՇԱԲԱԹ ՄԻՆԶԵՆ ՆԱԳԱՆՁ

Ծիշող շաբաթ մը ետք կը սպառի երկամսեայ պատերազմին վերջ տուած եւ ապա երկարածգուն զինարարի ժամկէտը, թէ մինչեւ օրս իսրայէլեան ուժեր տակաւին տեղակայուած են հարաւային սահմանները որոշ շրջաններու մէջ: Իսրայէլեան լրատուամիջոցներ շաբաթավերջին նշեցին, որ բանակը ստացած է լիբանանեան հողերէն քաշուելու հրահանգ, սակայն երկէ իսկ իսրայէլեան ուժերուն աշխուժութիւնը ակնյայտ էր հարաւարեւելեան հատուածի շարք մը գիւղերու մէջ, ուր տակաւին կը շարունակուի բնակարաններու քանդումը եւ այգիներու աւերումը:

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՆԱՍԱԿԱՆ ԺՈՋԵՑ ԱՌԻԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԱՌԻՑ ՍԱԼԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ



Վարչապետ՝ Փոխվարչապետ՝ Արտաքին գործեր՝ Պաշտպանութիւն՝ Ներքին գործեր՝ Ելեւնուտք՝ Առողջապահութիւն՝ Աշխատանք՝ Ուժանիւթ՝ Հաղորդակցութեանց միջոցներ՝ Զբօսաշրջութիւն՝ Տեղեկատուութիւն՝ Ճարտարարուեստ՝ Երկրագործութիւն՝ Ընկերային հարցեր՝ Կենսոլորտ՝ Վարչական բարգաւաճում՝ Երիտասարդութիւն եւ մարմնակրթութիւն՝ Կրթութիւն՝ Արդարադատութիւն՝ Գաղթականաց հարցեր՝ Տնտեսութիւն՝ Հանրօգուտ աշխատանքներ եւ փոխադրութիւն՝ Մշակույթ՝	Նաուաֆ Սալամ՝ Թաւրէ Միթրի՝ Եուսէֆ Ռեժի՝ Միշէլ Արնասսա՝ Ահմատ էլ-Հաժժար՝ Եասին ժապար՝ Ռաքան Նասր էլ-Տիհ՝ Սոհամմատ Հայտար՝ Ժողով Սատի՝	Շարլ էլ-Հաժ՝ Լորա Լահուտ՝ Փօլ Մարքոս՝ Ծօ Իսա էլ-Խուրի՝ Նիզար Հանի՝ Համիդ էլ-Սեյտ՝ Թամարա էլ-Ձեյն՝ Ֆեւի Մեքի՝	Նորա Պայրազտարեան՝ Ռիմա Քարամի՝ Ատէլ Եմին Նասսար՝ Քամալ Շըհատէ՝ Ամէլ էլ-Պիսաթ՝ Հանրօգուտ աշխատանքներ Ֆէյեզ Ռասամի՝ Ղասսան Սալամէ՝
--	--	--	---

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Վերջերս կայացաւ Ա.Գ. Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի 59-րդ Պատգամաւորական ժողովը, որուն բացումը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 27 Յունուար 2025-ին եւ ամարտեցաւ Երկուշաբթի, 3 Փետրուար 2025-ին: Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի մեջ գործող մասնաճիւղերու պատգամաւորները, ինչպէս նաեւ Ա.Գ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենադպիր ընկ. Ալեքսան Բեռլեանը:

Ա.Գ.Հ.Կ. Լիբանանի շրջանի 59-րդ Պատգամաւորական ժողովը, քննարկել է ետք Կուսակցութեան անցեալ շրջանի գործունէութիւնը, վերահաստատեց Լիբանանի քաղաքականութեան մէջ իր նոյն ուղղութիւնը, մնալով կառուցական Լիբանանի անկախութեան, գերիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ պետականութեան սկզբունքներուն:

Ժողովը գոհունակութեամբ ողջունել է ետք Լիբանանի նախագահ գործ. ժողով Աունի ընտրութիւնը, շեշտեց որ անոր ընտրութիւնը նոր յոյս կը պարգեւէ Լիբանանի բարգաւաճման եւ յարատեւման:

Ազգային եւ գաղութային հարցերու շուրջ, ժողովը անդրադառնալով ետք անցնող երկու տարիներու ընթացքին լիբանանահայութիւնը յուզող հարցերուն, որոշեց որ Կուսակցութիւնը կը շարունակէ մնալ գործնական միասնականութեան եւ համագործակցութեան ջատագով՝ ի խնդիր լիբանանահայութեան ամրապնդման:

Ընդունուեցաւ համապատասխան որոշումներ եւ բանաձեւեր յառաջիկայ շրջանին համար:

Ժողովի ամարտին տեղի ունեցաւ Ա.Գ.Հ.Կ. Լիբանանի շրջանի նոր Վարիչ մարմինի ընտրութիւն, հետեւեալ կազմով՝

- Ընկ. Վանիկ Տազետեան (ատենապետ)
- Ընկ. տղթ. Մարտիկ Ժամկոչեան (փոխատենապետ)
- Ընկ. Տիգրան Միհրանեան (Ատենադպիր)
- Ընկ. Գեորգ Տաղլեան (Փոխատենադպիր)
- Ընկ. Միհրան Սեֆերեան
- Ընկ. տղթ. Սարգիս Պետիկեան
- Ընկ. Միհրան Շահինեան
- Ընկ. Վաչէ Փօլատեան
- Ընկ. Լուիսիկ Կոստալազեան
- Ընկ. Սարգիս Մուրալեան
- Ընկ. Աւագ Պարախեան

Պէյրուս, 10 Փետրուար 2025
Ա.Գ.Հ.Կ. Լիբանանի շրջանի Վարիչ Մարմին

ՅԻՇԵԼՈՎ ԱՅՆԹԱՊՆ ՈՒ ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Ամեն անգամ որ ոտք դնենք Փետրուարի առաջին շաբաթը՝ ես կը յիշեմ Այնթապը: Արդարեւ, Փետրուար 8-ն Այնթապի հայութեան պատմութեան մէջ տխուր թուական մըն է: Այդ օր, 8 Փետրուար 1921-ին, աւելի քան տասը ամիս տեւող հերոսական ինքնապաշտպանութենէ մը ետք այնթապահայերը վերջնականապէս ու պարտադրաբար լքեցին իրենց սիրելի բնօրրանը ու զանգուածաբար գաղթեցին դէպի Հայկա...: «Կիլիկիոյ Աթէնք»-ը ամայացաւ: Թուրքերը տէր դարձան բովանդակ քաղաքին ու զայն վերանկրտեցին «Կազի Անթապ» անունով...:



1915-ին այնթապցիք անգամ մը տարագրուած էին արդէն, Կիլիկիոյ ու Արեւմտահայաստանի հայաբնակ միւս գաւառներուն նման: Բայց Ձիմադադարէն ետք (1919), Դաշնակից զօրքերու Կիլիկիա մուտքէն քաջալերուած, հազարաւորներ կրկին տուն վերադարձած էին ի՛նչ յոյսեր փայփայելով...:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

ԴԱՄԲԱՆ

«Մարդն ընդունակ է լաւագոյնին եւ վատագոյնին, բայց վատագոյնի դէպքում է աւելի կատարեալ»:
Ֆրանսական

Մարդկութիւնը իր զարգացման հազարամեակների անցած ճանապարհին անդադար փոփոխութիւնների է ենթարկուել միշտ բարելաւուելու եւ առաջադիմելու սկզբունքով մտաւոր, հոգեբանական, կենցաղային, բարոյական, կրօնական, փոխադարձ յարաբերութեան եւ կեանքի տարբեր բնագաւառներում, ուր տեղի են ունեցել յայտնագործութիւններ ու նորարարութիւններ: Այսօրուայ մանկահասակները չեն կարող պատկերացնել, որ իրենց ձեռքի խաղալիք դարձած բջջային հեռախօսը (smartphone) ընդամենը երեք տասնամեակ առաջ գոյութիւն չուներ, իսկ արդի գործնապայշտ (pragmatique) մթնոլորտը թերեւ բոլորի ճաշակով չէ: Գոգեկան ու բարոյական առունով բազում են ժողովուրդներ եւ կրօններ, որոնք կեանքի ու մահի իրարից յաւերժ անբաժանելի փաստը երկնային իրականութեան շարունակութիւնն են համարում: Շատերն են փորձել ու ցանկացել բացայայտել ու լուսաբանել, հետագայ կեանքի առեղծուածային գաղտնիքը, բայց հրաժարուել են խնդիրը մինչ օրս մնացել է թերուս կղերականների հայեցողութեան, առանց մի քայլ առաջանալու, իսկ գիտնականները՝ լռում են:

Այդ խնդիրը, բնութեան պարտադրած անհերքելի պայման է եւ քննարկման ենթակա չէ: Եթէ կեանքի ծագման մասին չունենք ստոյգ տեղեկութիւն ու բացայայտում, ապա մահի պարագային պատճառներն յայտնի են եւ պարզ՝ ծերութիւն, հիւանդութիւն, տարբեր տեսակի սպանութիւններ, ոճիր, մաշում, արկած եւ այլ բնական ու անբնական պատրուակներ:

Դեռանախնայ ժամանակներից ի վեր մարդկութիւնը ծիսապատարութեան աւանդոյթներ է ստեղծել ցեղերի ու երկրների պայմաններին համապատասխան եւ եթէ նորածինների առիթով խրախճանք ու խնջոյք է լինում, ապա մահի պարագային՝ յուղարկարութեան ծեսերը այլ բովանդակութիւն ու ծաւալ էին ունենում ըստ երկրի աւանդութեան եւ հանգուցեալի ունեցած անհատական կարողութեան եւ հասարակութեան կամ ընտանեկան միջավայրում զբաղեցրած դիրքին:

Կեանքի յետմահու շարունակականութեանը, հնագոյն ժամանակներից, մինչ արդի պայմաններում, դեռ կան հաւատացողներ: Մի՞թէ այդ չէ շքեղ թաղումների, կոթողների ու տապանների կառուցման պատճառը, թէ՛ գերեզմանոցների, թէ՛ հասարակական վայրերում, որ եգիպտական քարէ դամբարանների (sarcophage) եւ այլ կառոյցների տրամաբանական շարունակութիւնն են: Բարոյական առունով, հանգուցեալի յիշատակը յաւերժացնել է նրանց հիմնական ու միակ նպատակը:

Բազմաթիւ են այդպիսի կառոյցները աշխարհում ցրուած, որոնցից կարելի է յիշել Ապու Միմպելը, որ կերտուել է Եգիպտոսում, Նեղոսի ափին՝ նուիրուած Ռամսես 2-ին եւ կնոջը՝ Նեֆթիթիին: Այդ տարածքում է կառուցուել նաեւ աշխարհի հրաշալիքներից՝ Քեոպսի բուրգ-դամբարանը: Նոյնքան յիշուելու արժանի է հրաշակերտ Թաջ Մահալ դամբարանը Ազրա քաղաքում, որ կերտել է 1632-ին Գնդկաստանի Շահ Ջահան կայսրը իր սիրելի կնոջ՝ Մոււնթազ Մահալի 14-րդ ծննդաբերութեան ընթացքին վախճանման առիթով:

Մեծ քանակութեամբ դամբարաններ տարածուած են տարբեր երկրներում, ինչպէս կեղոսական Ամերիկան, Գնդկաստանը, Մերձուոր Արեւելքը եւ այլն, որոնցից կարելի է նշել Փարիզի Պանթէոնը, ուր իրենց վերջնական հանգիստն են վայելում բազմաթիւ մտաւորականներ ու քաղաքական գործիչներ, ինչպէս նաեւ մեր ազգակիցներ Միսաք եւ Մելինէ Մանուշեանները, իսկ Լեհիմի դամբարանը կառուցուել է Մոսկուայում հարիւր տարի առաջ, ուր պահուում է նրա զմռուած դին: Այս կառոյցներից ոմանք աղօթատեղի են:

Վերոնշեալից պարզ է, որ դամբարանները կերտուել են կայսրների ու անուանի աճանց համար, ուր հասարակ մահկանացուների համար տեղ չկար, անհասանելի էր: Նրանց համար նախատեսուած է թաղում հողի մէջ փորուած խոռոչում, կամ հրկիզում, որ համատարած կարգ են ողջ աշխարհի համար, միայն թէ ամէն երկիր ունի իր ուրոյն աւանդոյթն ու ծիսական ոճը:

Դիակը հրկիզելու դէպքում աճիւնը պահուում է սափորի մէջ կամ ցրում ազատ տարածքում ու գետի մէջ, մինչ հանգուցեալի թաղման կարգը կատարուում է գերեզմանոցում, որ յատուկ փակ տարածք է սոսկ այդ նպատակին տրամադրուած:

Որեւէ անպատեհութիւն չի եղել հազարամեակների ընթացքին, մինչեւ որ, արեւմտեան խոշոր քաղաքները, ուր գետինը թանկարժէք է, յազեցան գերեզմանակոթեանք, իսկ առանց որեւէ օգտակարութեան գերեզմանոցների զբաղեցրած հսկայական տարածքները խանգարում էին շինարարական ծրագրերի իրականացմանը: Քաղաքի պատկան մարմինների մօտ միտք ծագեց եւ որոշեցին փուլային հերթական կարգով մի փոսի մէջ թաղել միեւնոյն ընտանիքի պատկանող մի քանի դիակ: Գաղափարը ընդունուեց եւ բարձր գնահատուեց հասարակութեան կողմից առանց հակադրութեան:

Մեր երկրում նման լուծումի անհրաժեշտութիւն ունենք ի նկատի ունենալով երեւանի գերեզմանոցների ոչ միայն ողբալի ու անիշխանական (anarchique) վիճակը, ուր տապաններին մօտեմալը խիստ վտանգաւոր ու դժուար պայմանների հետ է կապուած, նաեւ շիրիմների վրայ քայլելով, քանզի ոչ մէկ արահետ կամ շաւիղ, չկայ նաեւ տապանների որեւէ տողագրութիւն (alignement):

Միւնչդեռ խելամիտ ու բարի կամք դրսեւորելու պարագային քաղաքապետարանի կողմից Աւգեան ախոռի նմանուող արդի երեսնեան գերեզմանոցները, ուր քայլելը նոյնիսկ դժուարութիւնների հետ է կապուած, պէտք է վերանայն ու օգտակար կանաչապատ տարածքի, որ տարրական յարգանքի տուրք մատուցելու քայլ կը լինի յաւերժ մնջեցեալների յիշատակին:

Բազում գլուխկոտրուկ հարցերով ծանրաբեռնուած քաղաքապետարանի աւագանու առջեւ այս խնդիրը եւս արժանի է քննարկութեան:

ՌՈՒԲԵՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆԵՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ (38)

Գեղարուեստական կրկնութիւն (ը)

Ա. Ծառուկեանի «Թուղթ առ Երեւան»-ի հետեւեալ հատուածը իր կարգին կրկնութիւններու բարդ կօիկ մըն է՝ յանգերգի, նոյնասկիզբի ու նոյնավերջի ձեռնհաս համարողութեամբ մը, որ կը ցոլացնէ բանաստեղծին նոյնքան բարդ ու խռոված հոգեվիճակը.

Յէջ ջա՛ն Երեւան,
Լինն՞ ես քնած, թէ լինն՞ արթուն,
Յէջ ջա՛ն Երեւան,
Ձարկերը սրտիս տրոփի առ տրոփի,
Յէջ ջա՛ն Երեւան,
Կ'երգեն քեզ համար միայն օրհնութիւն...
Միայն օրհնութի՛ւն, միայն օրհնութի՛ւն
Եւ սէ՛ր ու կարօտ,
Սէ՛ր եւ օրհնութիւն,
Յէ՛յ ջա՛ն Երեւան...:

Այս կրկնութիւններն ոչ մէկը կը վանէ ընթերցողը, ոչ մէկը տաղտուկի եւ ծանծորոյթի նուազագոյն զգացումը կը յառաջացնէ անոր մէջ: Բանաստեղծը իր ներաշխարհի փոթորիկին ճարտարօրէն բաժնեկից կը դարձնէ զինք ընկալողը, եւ ահա գրող ու ընթերցող միասնաբար կը նաւարկեն՝ յամբնուած սփիւռքահայու սիրոյ ու կարօտներու

Հատուածական կրկնութիւններուն չափ ազդու են նաւ բառային կրկնութիւնները. դարձեալ կը դիմենք Ծառուկեանին, որ գեղարուեստական կրկնութեան մեծ վարպետներն է:

Սարդարապատի հերոսամարտի նախօրեակն է.
«Գալիս եր նորից արինոտ ղնչով
Նոյն հրէշը՝ սեւ ժանիքը սրած,
Որպէսզի անգուսպ քափով մի վերջին
Վերջին բեկորիս տայ վերջին հարուած»:

«Վերջին» բառի երեքվեութեամբ բանաստեղծը յաջողած է ընթերցողի գիտակցութեան մէջ պատկերել այդ համազգային ճգնաժամային պայքարի ամբողջ օրհասականութիւնը. պահ մը կ'ունենանք այն տպաւորութիւնը, թէ ուրիշ ոչ մէկ բառ կամ լեզուական ոչ մէկ հնարք ի վիճակի պիտի ըլլար այնքան ուժգին տպաւորել մեզ, որքան այս մէկ հատիկ ածականը, որ երեք անգամ կրկնուած է սալին վրայ գրեզագող կռահի սաստկութեամբ:

Սարդարապատին նուիրուած ուրիշ քառատող մը՝ իր նոյնքան զոնգուն կրկնութիւններով.

«Եւ քարէ մարդիկ, քարէ սրտերով,
Քարէ սրտերով ու կամքով քարէ,
Հայոց լեռներում կռանում էին
Կեանքի ու մահուան երզը մետաղէ»:
Գրիշ Դաւթեան, «1918 մայիս 28»

Նոյն տպաւորութիւնը ձգելու համար կատարած է Թեքեան հետեւեալ կրկնութիւնը՝ իրեն բնորոշ աւելի մեղմ քնարակաւութեամբ մը.

«Ու երբ վերջին արեւիս վերջին ճաճանչն ալ մարի,
Անուճը ի շուրթ դեռ կ'ուզեն ողջունել այզը մահուան»:

ՅԻՇԵԼՈՎ ԱՅՆԹԱՊՆ ՈՒ ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

(Շարունակուած էջ 1-էն)

Ֆրանսայի երկրիմի քաղաքականութիւնը, սակայն, հայոց խանդավառութիւնը կէս ճամբան թողուց: Մուսթաֆա Քեմալի «միլլի» շարժումին հետ կնքուած գաղտնի համաձայնութեան մը հիմամբ՝ ֆրանսական բանակը Կիլիկիան պարպեց անակնկալօրէն ու հայերը միս-միմակ թողուց կատղած թուրքերուն դէմ...: Հոս է ահա, որ այնթապահայերը ձեռք-ձեռքի տալով՝ հայաբնակ թաղերուն մէջ մղեցին հերոսական գոյամարտ մը, որ երկարեցաւ 1 Ապրիլ 1920-էն մինչեւ 8 Փետրուար 1921, աւելի քան տասը ամիս:

Շա՛տ գրուած է Այնթապի գոյամարտին մասին: Ոմանք զայն կը նկատեն ռազմավարականօրէն յաջողագոյն դիմադրութիւնը 1915-ի եղեռնին կամ անոր յաջորդող շրջանին, որովհետեւ այս հերոսամարտին շնորհիւ այնթապահայութիւնը (շուրջ 12.000 հոգի) փրկուեցաւ ստոյգ մահէ ու առանց մարդկային մեծ վնասներու կրցաւ տեղափոխուիլ Հայկէս: Ծանօթ մտաւորական Գեորգ Ա. Սարաֆեանի «Պատմութիւն Անթապի հայոց» երկիատոր ծաւալուն ու շքեղ պատմագիրքը (Լոս Անճելըս, 1953), ինչպէս նաեւ Ա. Կեսարի «Այնթապի գոյամարտը» հատորը (Ամերիկա, 1945) առատ նիւթ կը հայթայթեն մեզի այս մասին: Թաւուքեան քահանայի «Տառապանքի օրագիր»-ն ալ (Պէրլուք, 1991) կու տայ ակնամտեսի յաւելեալ մանրամասնութիւններ: Միւս կողմէ, երկարամեայ կրթական մշակ ու ամբողջակալի դաստիարակ Գրիգոր Պօղարեանի երկիատոր «Այնթապականք» ժողովածուներն ալ (Պէրլուք, 1974) մեր առջեւ կը պարզեն այնթապահայոց տուրքը հայ գիրին ու մշակոյթին:

Օ՛, ազգային ու տոհմիկ, նիւթական ու անմիւթական որքան հարստութիւններ ունէր հայ Այնթապը: Ո՞րմէկը յիշենք. Աղեմական, Հայկանուշեան, Վարդանեան ու Կիլիկեան վարժարաննէ՛րը, Կեղորնական Թուրքոյր գոլի՛ճը, Պալեաններու ձեռակերտ Ս. Աստուածածին հոյակապ եկեղեցի՞ն (մզկիթի վերածուած), Այնթապի հրաշալի ասեղնագործութիւնը (հայրենի ազգագրագէտ ու արուեստաբան Հրազդան Թոքմաճեան ծաւալուն պատկերագիրք մը հրատարակած է այս մասին, Հայկէս, 2015-ին), թէ՛ այնթապցի երեւելի դէմքերը՝

Այնպէս ալ Դուրեանի «Լճակ»-ին հետեւեալ հատուածը. «Հող աստղերը չեն մեռնիր, Շաղիկներն հող չեն թռնմիր, Ամպերն չեն թրջեր հող, Երբ խաղաղ էք դու եւ օդ»:

Հողը լճակն է. մահէն կրնկակոխ հալածուող Դուրեան անոր ջուրերու խաղաղ, ջինջ ու յաւիտենական խորքին մէջ պահիկ մը կը տեսնէ իրեն զլացուած կեանքը, ծաղիկներն ու խաղաղութիւնը, որոնց փոխարէն իրեն բաժին հասած է հոգին խռովող այն «անհուն բո՛ցը», որ յարատեւ կ'այրէ ու կը մրկէ զինք. ան ո՛չ կը հանգչի, ո՛չ կը հանգի: Սիւս թէ ինչու խոր երանութեամբ մը կ'ըմբռնչանէ լճակին իրեն պարգեւած խաղաղութիւնը, որ կ'արտայայտուի հող-ին կրկնութեամբ: Գեղարուեստական շատ նուրբ զգացողութեամբ, – կամ, եթէ կ'ուզէ՞ք՝ հնարամտութեամբ, – Դուրեան բառային միօրինակութիւնը մեղմացուցած է հող-ին տեղափոխութեամբ. զայն դրած է նախ՝ տողին սկիզբը, ապա՝ մէջտեղը, յետոյ՝ վերջը: Այս հնարքին ոճական արժէքի տարողութեան անդրադառնալու համար՝ վերընթերցենք քառատողը նոյնասկիզբ դարձնելով երկրորդ եւ երրորդ հող-երը...:

* * *

Իսկ հիմա փոխադրուիմք հայրենի անդաստանները՝ հունձքի օրերուն.


«Տփանքներ նոր ծփանքներու ներքեւ ընդմիշտ կը փուլզին,

Ալիք կ'ըլլան ալօսին մէջ ծովէ՛ր, ծովէ՛ր, ծովէ՛ր դեղին» (ԴՎ):

Բանաստեղծը կրկնութիւններու միջոցով տուած է հայ գիւղացիին հոգեկան խիճոյն ու հրճուանքը՝ ի տես առաջ՝ ծովածաւալ՝ հունձքին, այն աստիճան, որ ընթերցողը ոչ մէկ ձեւով ու չափով կը զգայ ախտագին կրկնութեան մը տաղտուկը, մանաւանդ որ այնքան ճշգրտութեամբ ու հարազատութեամբ նկարագրուած են տեղի ունեցող գործողութիւնները:

Մինչ տակաւին կանգուն են ցորենի ցօղունները՝ հովին հետ անոնք իրարայաջորդ ծփանքներ կը կազմեն, իսկ երբ գերանդիի հարուածներուն տակ լաս-լաս փուլ կու գան՝ ալիքներ կը կազմեն գետնին վրայ, ու արտը կը վերածուի անձայրածիր դեղին ծովու: Բոլոր կրկնութիւնները միաժամանակ յոգնակի կիրարկուած են, եւ այս ալ իր կարգին կը մատնէ հունձքին առատութիւնն ու անոր առթած համատարած ու վարակիչ բերկրութիւնը:

Գեղարուեստական կրկնութեան առարկայ կրճան դառնալ կարգ մը հնչիւններ եւս, եւ այս հնարքին դիմած են ինչպէս օտար, այնպէս ալ հայ բանաստեղծները՝ թէկուզ Նարեկացիէն սկսած:



ՅԻՇԵԼՈՎ ԱՅՆԹԱՊՆ ՈՒ ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Կիւլտերեան Բաբգէն աթոռակից կաթողիկոս, ձեռագրագէտ Նորայր արք. Ծովական, բանաստեղծներ Բիւզանդ. Թօփալեան ու Երուանդ Պարսուեան, Չեքիճեան եղբայրներ (Գեորգ եւ Բիւզանդ), վեր. Մանասէ Ծնորօքեան եւ այլն, եւ այլն:

Ի դէպ, Հայկաի հայոց ազգային գերեզմանատան մէջ կայ Այնթապի հերոսամարտին ծօնուած մեծող կոթող մը: Այն երջակից օրերուն, երբ գաղութը կապուէր ու կը շնչէր հայօրէն, հալէպաբնակ այնթապցիները ամէն տարուան Փետրուարի սկիզբը կը բոլորուէին այդ կոթողին շուրջ ու կ'ոգեկոչէին իրենց նահատակներն ու հերոսները՝ պաշտօնական հոգե-հանգիստով ու պատշաճ ելոյթներով: Այդ հպարտառիչ ու ոգեշնչող հաւաքները ալ չկա՛ն...:

Չմոռնա՛ք մամուլն ու հայրենակցական միութիւններն ալ: Այնթապցիք ունեցան (եւ ունին) հայրենակցական աշխոյժ միութիւններ Լիբանանի, Հայկաի (Կրթասիրաց Մշակութային Միութիւն անուամբ), հիւսիսային ու հարաւային Ամերիկա-ներու մէջ: Լիբանանաբնակ այնթապցիները, ի պատիւ իրենց, 1960-էն սկսեալ երկա՛ր տարիներ յաջողեցան հրատարակել «Հայ Անթապ» (այնուհետեւ՝ «Նոր Այնթապ») պարբերաթերթը, միշտ ճոխ եւ հետաքրքրական բովանդակութեամբ ու խնամեալ խմբագրութեամբ, պատմական հարուստ նիւթ կուտակելով անոր էջերուն մէջ, տասնամեակներու երկայնքին: Հայ սփիւռքի հայրենակցական բնոյթի ամենավերջին պարբերականներէն մին էր ան, որ դժբախտաբար կանգ առած է շուրջ տասնամեակէ մը իվեր (հաւանաբար վերջին թիւը կը կրէ 2012 թուականը, տպուած՝ Հայկէս, Թ. Թորանեանի խմբագրութեամբ): Չտարիւն այնթապցի ողբացեալ բարերար Արմէն Յարութիւնեան (Պէրլուք) մինչեւ իր մահը հետամուտ էր «Նոր Այնթապ»-ի կանոնաւոր հրատարակութեան:

Լիբանանաբնակ Այնթապցիներու Հայրենակցական Միութիւնը չի՞ մտածեր այդ մարած ջախը վերարծարելու մասին...:

Այս առթիւ, յարգանքով կ'ոգեկոչենք յիշատակը Այնթապի հերոսամարտի ղեկավար երեք դէմքերուն՝ Աւետիս Գալէմ-քեարեանին, Ատուր Լեւոնեանին եւ Ներսէս աւ. քհնյ. Թաւուքեանին:

L. Շ.



«ԵՐԿԱԹ-ԿԱՄՈՒՐԶ» Ի ՄՕՏԻ Ը.Մ.Մ.-Ի ԱԿՈՒՄԲԸ

Այս օրերուն շատ կը խօսինք ու կը լսենք նոր սերունդին հասկնալու եւ անոր հետ հաղորդակցուելու միջոցներուն, նաեւ՝ մեր ակումբները (դպրոցներն ալ) «թաղային» հոգեբանութենէն անջատելու եւ ժամանակին համընթաց նոր պայմաններով զարգացնելու մասին: Կարծեցիմք, որ միայն հիմա՝ AI-ի (արհեստական բանականութեան) սերունդին հետ է այս անլուծելի թուազող դժուարութիւնը: Մինչդէռ 80 տարի առաջ ալ նոյնն է եղեր: Ինչպէ՞ս... ստորեւ նմոյշ մը, որ կը յուսանք օրինակ ծառայէ վճռական քայլերու սիրահար պատասխանատուներուն:

Ծանօթ.- Օգտուած ենք Տիգրան Սարաֆեանի «Յայ մարմնամարզական միութեան պատմութեան հետքերով...» հատորէն:

Ա.

Յ.Մ.Մ. Պէյրուսի շրջանը ունեցաւ իր կեդրոնական ակումբը

1945-46-ական թուականներուն, շրջանի որոշ ղեկավար եւ անդամ ընկերներու մօտ նոր տրամադրութիւն մը սկսաւ դրսեւորուիլ: Տիրող կարծիքն այն էր, որ Միութեան թաղային ակումբները բաւարար չէին, որով անոնք չէին կրնար գրաւիչ միջավայր դառնալ նոր սերունդին համար, որուն ճաշակը, հետաքրքրութիւններն ու պահանջները ժամանակին համընթաց կը զարգանային եւ գոհացում կ'ակնկալէին:

Միութեան ակումբները առաջին առթիւ, հրապուրիչ ըլլալու էին պատանի-երիտասարդութիւնը կարենալ գրաւելու համար: Ուստի, աւելի ընդհանրացած, պահանջքի ձեւով կ'առաջարկուէր առուել ներկայանալի եւ անհրաժեշտ յարմարութիւններով օժտուած կեդրոնական ակումբ մը ունենալ. պայմանաւ որ ան հեռու չըլլար Սահակեան դաշտէն, որ մարզական օրրանը եղած է Յ.Մ.Մ.-ին եւ շատ սերունդներու:



Ներկայիս...

Վարչութեան կողմէ պարտականութիւն տրուած էր ընկ. Պէտրոս Մուշեանին եւ ուրիշ ընկերներու, որ ակումբի համար յարմարագոյն վայրի մը փնտռուէին ձեռնարկէն: Երկարատեւ ու յամառ որոնումներէ ետք, պարտականութիւն ստանձնած ընկերները կրցան օրուան պահանջը գոհացնող կալուած մը գտնել: Այս մէկը քիչ մը մեկուսացած շէնք մըն էր, փոքր պարտեզով, որ կը գտնուէր Պէյրուսի հիւսիսարեւելեան մուտքին գտնուող շոգեկառքի անցքի կամուրջին կից, Խալիլ Պետեւի թաղը եզերող փողոցին վրայ (այժմու Bible Bookshop-էն 20 մէթր ներս):

Վայրը յարմար նկատելով՝ ձեռնարկուեցաւ վարձակալական համաձայնագրի ստորագրման, անմիջական օժանդակութեամբ Յ.Մ.Մ.-ի Կեդրոնական վարչութեան ժրջանատեւնակները ընկ. Մինաս Խաչիկեանի:

Բնականաբար, ի լուր նոր եւ կեդրոնական ակումբի մը մօտալուտ բացումին, խանդավառութեան ալիք մը բարձրացաւ: Եղան ինքնաբերական նուիրատուութիւններ: Արդէն ապահովուած էին ակումբի կահուարման եւ հարկ եղած պիտոյքներու գնման անհրաժեշտ գումարները:

Մայր Յայրենիքէն պատուիրակութեանց ներկայութիւնը

Ակումբին գլխաւոր մուտքէն մինչեւ սրահ երկարող անցքին երկու կողմերուն կար գողտրիկ պուրակ մը, կանաչազարդ ու ծաղկաւեռ, բարետեսք: Կեդրոնը աւազանով: Մանաւանդ ամառնային եղանակին, Շաբաթ երեկոյ եւ Կիրակի ամբողջ օրը հոն կը բոլորուէին միութեան անդամներ ու համակիրներ, հիւրեր, ընկերակից զովագուցիչ-սուրճ եւ օշարակ: Գարուն-ամառ եղանակին ընկերա-ընտանեկան խրախճանք տեղի կ'ունենար ակումբի պարտեզին մէջ, նախաձեռնութեամբ ակումբի եւ ընկերային յանձնախումբերու ժրջան ընկերներուն, հաճելի ժամանց մը ընծայելով ներկաներուն:



1956-թ.: Հ.Մ.Մ.-ի նորարար ակումբի առաջին պաշտօնական այցելուներէն եղան Մայր Աթոռ Սբ. Էջմիածինէն Լիբանան եկած պատուիրակութիւնը (Փրօֆ. Աշոտ Աբրահամեան եւ Գեղաշ. Տէր Վահան Արքեպս. Կոստանեան) որ նկարուած է Հ.Մ.Մ.-ի վարչութեան եւ պատասխանատու անդամներու հետ:

«Երկաթ-կամուրջ»ի մօտի Յ.Մ.Մ.-եան ակումբը եռուն ու հարուստ գործունէութեան մը յիշարժան պատմութիւնը ունի: Անմոռանալի կը մնան ընկերա-ընտանեկան խրախճանքներն ու հաւաքոյթները աւանդական տօներու առթիւ կազմակերպուած: Նաեւ՝ այլ գաղութներէ ժամանած յարգելի անձնաւորութիւններու կամ Յ.Մ.Մ.-ի հրաւերով արտասահմանէն եկած օտար ֆուրբոլի խումբերու պատուիրակութեանց ի պատիւ սարքուած ընդունելութիւնները: Սակայն, այս բոլորէն առաջ եւ յետոյ՝ պատմական նշանակութիւն ունեցող հոգեկան մեծ բերկրանք առթեց, Յ.Մ.Մ.-ի համար, Մայր Յայրենիքէն եւ առաջին անգամ ըլլալով «Սպարտակ»-ի (1959-ին) եւ յետոյ, մօտաւորապէս մէկ տարի ետք, Լեւինականի (Կիւմրի) «Շիրակ» եւ ապա «Արարատ» ֆուրբոլի կազմներու պատուիրակութեանց ներկայութիւնը Լիբանան եւ Յ.Մ.Մ.-ի յարկի տակ: Այցեր՝ որոնք տօնական մթնոլորտ, անմարմնացած ցնծութիւն ստեղծեցին ոչ միայն Յ.Մ.Մ.-ի շրջանակէն ներս, այլեւ՝ բովանդակ լիբանանահայութեան մօտ:


Ակումբի յանձնախումբի կամաւոր անդամներ

Ահա, տիրող այս մթնոլորտի մէջ, գտնուեցան պատրաստակամ ու յանձնառու ընկերներ, որոնք ուզեցին, կամովին, ակումբի յանձնախումբի անդամ ըլլալ եւ ապահովել ակումբին բարեգործման եւ բարուք յանձնառման անհրաժեշտ բոլոր միջոցները: Ակումբի մը պատասխանատուին համար, վայրը իր «երկրորդ տուն»ն է, ուր պաշտօնատարը պարտաւոր է ամէն երեկոյ, առաջին ժամերէն մինչեւ ուշ առտն, ներկայ գտնուիլ հոն եւ հսկել կարգ-կանոնին, մաքրութեան, «պիւֆէ»ի սպասարկումի միութեան կանոնադրականի չափանիշներուն անյարիր երեւոյթները խստիւ արգիլել: Բայց նաեւ՝ համբերութեամբ պարտի տանիլ անկարգ ու խանգարիչ պատանի-երիտասարդներու օրինախախտումները, զանոնք գործողներուն բացատրելով, որ իրենց ընթացքը սխալ է, ուստի զայն պէտք չէ կրկնել:

Վերջապէս՝ ո՞վքեր էին այդ «կամաւոր» ընկերները: Թուենք զոնէ գլխաւորները.՝ Յարութիւն Զեքէնեան եւ Կիւլպէնկ Թելեան, երկու վաստակաւոր վեթերաններ, որոնց կողքին էին համեմատաբար երիտասարդներ Սարգիս Սամուրեան, Սկրտիչ Թորոսեան, Ֆիլիպ Յակոբեան, Գրիգոր Պաճազըզեան եւ Կարապետ Յաննեան:

Շոգեկառքին չնախատեսուած անպատեհութիւնը

Տիրող խանդավառ մթնոլորտն ոգեւորուած, մեկուսացած կամ «լուսանցքի վրայ» գտնուող ընկերներ սկսան յանախակի երեւալ ակումբէն ներս, ինչ որ ուրախալի երեւոյթ էր անսպասելի ու կը նպաստէր «հին» ու «նոր» սերունդներու գործակցութեան, յարաբերութիւններու սերտացման եւ աշխուժացման:



Ակումբին թաղային խճողումներէ հեռու, քիչ մը մեկուսացած ըլլալը առաւելութիւն մըն էր: Կարելի էր անկէ ներս բազմամարդ ձեռնարկներ կայացնել: Նաեւ ունենալ «աղմկալի» երաժշտութեամբ հաւաքներ ու խրախճանք:

Սակայն, այս առաւելութեան կողքին, ակումբին շոգեկառքի գծին մօտ գտնուիլը, երբեմն չնախատեսուած անպատեհութիւն կը ստեղծէր: Կը պատահէր որ համդիսութեան մը, ընկերային հաւաքի, ժողովի կամ հիւրընկալումի մէկ պահուն, շոգեկառքը անցնի ակումբին ցանկապատին թովէն, գրեթէ «քսուելով»: Վայրաշարժին սուլոցը եւ պատճառած դողդիւնը կը ստեղծէին չափազանց տհաճ պահ: Մինչեւ անգամ յայտագրի դադրեցման պատճառ կ'ըլլային, ստիպելով որ միջոցառումը ընդմիջուի մինչեւ զնացքին «հեռանալը»: Այս «անպատեհութիւնը» երբեք պատճառ չէղաւ, որ Յ.Մ.Մ.-եան ակումբային ձեռնարկները դանդաղին կամ ընդմիջուին: Պատասխանատուներ իրենց միջոցառումները, հաւաքներն ու հանդիսութիւնները կը կայացնէին շոգեկառքի անցնման չզուգահայտ ժամերուն: Բարեբախտաբար, որոշ ժամանակ յետոյ, վերջնականօրէն դադրեցաւ շոգեկառքի երթելը: Մինչ այդ արդէն, Յ.Մ.Մ. իր կեդրոնատեղին տարբեր վայր փոխադրած էր: Միութիւնը նոր եւ աւելի պերճազեղ ակումբով մը օժտուեցաւ:

Ակումբի բացման հանդիսութիւնը

Պէյրուսի շրջանի նոր ակումբի բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 20 Նոյեմբեր 1948-ին: Օրուան հանդիսութեան կը նախագահէր նուիրեալ կրթական մշակ եւ շրջանի ազգային ու կուսակցական պատասխանատուներէն ընկ. Սիիրան Սէֆերեան:



«Հ.Մ.Մ.ի Տուն»ի բացման հանդիսութեան յաջորդած խրախճանքի հաւաքէն տեսարան մը: Զատին աջ՝ Գ. Պաճազըզեան, Տ. Սարաֆեան, Ն. Մանկեան, վեթերան Արսէն Կիտուր որ իր անձուանալի «Հէյ ձանրձով կ'ոգեւորէ միջնոլորտը, Զուէն Լալէեան, Յ. Յակոբեան, Յ. Պաղնկեանեան, Գ. Գափլանեան:

Ընկերոջ խրախճանքի եւ իմաստալից բացման խօսքէն յետոյ, խօսք առին Յ.Մ.Մ.-ի Կեդրոնական վարչութեան անդամ ընկերներ՝ Մինաս Խաչիկեան եւ Արմէն Ղարիպ: Անոնք իրենց ոգեւորիչ ելոյթներով մաղթեցին եւ առաջարկեցին, որ նոր ակումբը դառնայ ամէն մէկ Յ.Մ.Մ.-ական անդամի երկրորդ տունը: Խորհուրդ տուին որ, ցանկալի այդ մաղթանքի յաջողութեան հասնելու համար, նոր ակումբէն ներս տեղի ունենան ծրագրուած ընկերային եւ այլ բնոյթի շինիչ ձեռնարկներ, որ նոր սերունդէն ու երիտասարդութենէն նորանոր խաւեր ներգրաւուին միութեան կամ աշխատանքներուն:

Հանդիսութեան մեծագոյն անակնկալն ու տպաւորիչը եղաւ ելոյթը իր ծանրախոհութեամբ ծանօթ, սակաւախօս բայց շատ յարգելի, Ս.Գ.Գ.Կ.-ի երեք սերունդի մեծավաստակ ներկայացուցիչ ընկ. Բազարատ Սիւնիքի, որ հակիրճ բայց իմաստալից խօսքերով զնահատեց Յ.Մ.Մ.-ը եւ յաջողութիւն մաղթեց անոր:



Պէյրուսի «Երկաթ-կամուրջ»ի շոգեկառքի կից գտնուող ակումբին մէջ, 1959-թ-ին կայացած տօնական խրախճանք: Նկարին մէջ կը ճանչցուին՝ ձախէն աջ՝ Բիւզանի Մելգոնեան, Տիկ. Վարդուհի Սարաֆեան, քոյր եւ եղբայր Աւետիս Փաթաթեաններ, Օննիկ Ծամպուլեան, Նիքոլա Մեծտեկեանի (Ապու Սաատ - «Մազրա» խումբի պատասխանատու): Նկարի աջին՝ Տէր եւ Տիկ. Յարութիւն Սիւտեանի (Կոնակէն դիտուած), իսկ ձախէն՝ Արշակ Գալստեան...:

Գեղարուեստական յայտագրին իրենց մենբրաններով մասնակցութիւն բերին օրդ. Սիրուհի Զիլինկիրեան եւ տաղանդաւոր երգչուհի օրդ. Սառա Տարտաղանեան: Ուրախ եւ խանդավառ մթնոլորտի մէջ հանդիսութիւնը իր աւարտին հասաւ, օրուան նախագահին՝ ընկ. Սիիրան Սէֆերեանի փակման ոգեշունք խօսքով:

Ը.Մ.Մ.-Ի ՊԱՏԱՆԻՆԵՐԸ

Անուն-Մականուն
Սելենա Ալ Խուրի

Տարիք՝
12 տարեկան

Յաճախած դպրոց՝
Վահան Թեքեան
Վարժարան

Դասարան
Նախակրթարանի
6-րդ դասարան

Ն.Ս.Ս.Ս. «ԱՐԵՊ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՓՈՐՁԵՐ



Ուրախութեամբ կը յայտարարենք, որ արդէն սկսած է Ն.Ս.Ս.Ս. «ԱՐԵՊ» պարախուների փորձերը եւ անոնց կ'ընթանան ըստ սահմանուած յայտագրի:

Պարախուներին մաս կազմելու կամ յանձնարարելու մանրամասնութեանց համար կը խնդրուի հեռաձայնել 70/265829 քիւի:

Ն.Ս.Ս.Ս.-ի «ԱՐԵՊ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ



Ընկերու Սեդրի Պարախեանի ընդ Քրիսթոֆըր Սըթրիի նշանախօսութեան ուրախ առիթով (8 Փետրուար 2025), «ԱՐԱՐԱՏ» իր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնէ խօսեցեալ զոյգին եւ անոնց ընտանեկան պարագաներուն:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Յ.Ս.Ս.-ի Արեւիկա Սեդրի Պարախեանի ընդ Քրիսթոֆըր Սըթրիի նշանախօսութեան ուրախ առիթով, Յ.Ս.Ս. Պէյրութի Սկաւտական խորհուրդն ու խմբապետական կազմը ջերմապէս կը շնորհակալեն խօսեցեալ զոյգը եւ անոնց ընտանեկան պարագաները:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՐՕՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ԶԱՄԱԽՄԲՈՒՄ

25 Մայիս 2025

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

ՐԲԸՍ - ԼԻԲԱՆԱՆ

Տիկնանց Մասնաճիւղերու Զամախմբում

Միջինքի ճաշ

Չորեքշաբթի, 26 Մարտ 2025

ARARAD DAILY NEWSPAPER
 MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
 Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
 Beirut | Lebanon | www.araraddaily.com
 email: aradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية | المديرية المسؤولة: اني صرافيان
 تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (ش.م.م.)

ՏԵԱՌՆԸՆԴԱՌՎՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿ ԵՒ ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՐՔԻՆ ՄԷՋ

Հինգշաբթի, 13 Փետրուար 2025-ի երեկոյեան ժամը 4:00-ին, Անթիլիասի Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պիտի կատարուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի տաճար ընծայման (Տեառնընդառաջի) նախատօնակի արարողութիւնը:

Նախագահութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Նախատօնակի ընթացքին տեղի պիտի ունենայ մանուկներու տաճար ընծայման արարողութիւնը Քրիստոսի օրինակով: Յետեկեղեցական արարողութեան, Մայրավանքի շրջափակին մէջ պիտի վառուի աւանդական խարոյկը:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն, յատկապէս երիտասարդ ծնողներուն, մասնակցելու Տեառնընդառաջի հոգեպարար արարողութեան, որպէսզի իրենց մանուկները Աստուծոյ ընծայեն եւ հայցեն Ամենակալին շնորհներն ու պաշտպանութիւնը

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՀԸՐՄԵԼԻ ՍԱՀՄԱՆԸ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՆՈՐ ԳԼԽԱՑԱԻ

Շարունակուած էջ 1-էն

Լիբանանեան բանակը, իր կարգին, շարունակեց զինադարձի համաձայնութեան գործադրութիւնը եւ մուտք գործեց Թալուսէ, Պենի Զայան եւ այլ շրջաններ, ուրկէ քաշուած են



խրայլեացիները: Լիբանանցի զինուորները իսկոյն գործի լծուեցան վերաբանալու ճամբաները եւ յայտնաբերելու չպայթած ռումբերը, քաղաքացիներն պահանջելով չվերադառնալ իրենց բնակարանները, մինչեւ անվտանգութեան ամրապնդումը:

ՓԵՏՐՈՒՐԵԱՆ ԶԻՒՆԱՍՐԻԿ

Իւրաքանչիւր տարի, գրեթէ այս օրերուն Լիբանան ակամատես կը դառնայ կլիմայական կտրուկ փոփոխութիւններու: Տեղումներու բացակայութեամբ յատկանշուող այս եղանակի պարագան տարբեր չէ: Անցնող քանի մը օրերուն, լիբանանեան լեռները եւ լեռնային գիւղերը հազան իրենց սպիտակը, մինչ ծովեզերեայ շրջաններուն բնակիչները կ'ապրին սաստիկ ցուրտ օրեր: Կը սպասուի, որ նոյն վիճակը շարունակուի նաեւ յառաջիկայ երեք օրերուն, մերթ ընդ մերթ փակելով բարձրագոյն լեռնանցքներ Այնաթա-Արզը, Քֆարտիպիէն-Յատաս Պալպաթը, Աբուրա-Պեքաան, Զըրմէլ-Տանիյէն եւ այլ լեռնային ճամբաներ:

ԳՆԵԼ ԿԱԶԱՆ ԵՒ ԿՑԵԼ ԳԱՆԱՏԱՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփ յայտնեց, թէ յանձնառու կը մնայ Կազան գնելու իր որոշումին, չբացառելով անոր որոշ հատուածներու փոխանցումը միջինարեւելեան այլ երկիրներու՝ զայն վերակառուցելու նպատակով: «Կազան պիտի վերածեն բարգաւաճող տարած-



քի, պիտի հոգան պաղեստինցիներուն եւ երաշխաւորեն, որ անոնք չսպաննուին», հաստատեց Թրամփ: Ան մտադրութիւն յայտնեց այս հարցով տեսակցիլ սեւտական եւ եզրափակական ղեկավարութեանց հետ, առանց բացառելու կարգ մը պաղեստինցիներու Միացեալ Նահանգներու մէջ հիւրընկալումը: Խօսելով Ուքրաինայի հարցին մասին, Թրամփ վստահեցուց, որ յառաջընթաց կայ Ռուսիոյ նախագահին հետ խորհրդակցութեանց մէջ, խոստանալով յարմար առիթով տեսակցիլ: «Ինչ հրաշալի կ'ըլլայ, եթէ Գանատա դառնայ Միացեալ Նահանգներու 51-րդ նահանգը», իր գայթակղիչ հրաւերը կրկնեց Թրամփ: Ան քանի մը օր առաջ սպանաց մաքսային յանձնարարութեան տուրք սահմանել եւրոպական երկիրներուն նկատմամբ, իսկ Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը խոստացաւ հակադարձել ամերիկեան տուրքերուն:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

11 Փետրուար 2025: Տարուան 42-րդ օրն է: 2025-ի աւարտին կը մնայ 323 օր:

Պէպեր-տօներ
 1929 - Վատիկանը անկախացաւ Իտալիայէն:
 1979 - Իրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակի օր:
 2015-ն - ՄԱԿ-ի Գիտական ղլորտէն ճերմ կանանց եւ աղջիկներու միջազգային օր:
 1967-էն - Ճապոնի մէջ Պետութեան հիմնադրման օր:
 1992-էն - Հիւանդներու համաշխարհային օր:
 2011 - 30 տարի իշխանութեան զուլիք մնալէ ետք եզրափակուի նախագահ Յոսեֆ Սուպարաք իրաքարեցաւ իր պաշտօնէն «Արաբական գարուն»-ի անուան տակ կազմակերպուած զանգուածային ցոյցերու պատճառով ճնշումներէ ետք:
 1990 - Մարդու իրաւունքներու ակամաւոր պաշտպան Նելսոն Մանտելա ազատ արձակուեցաւ 27 տարուայ կալանքէն:
 1989 - Պատմութեան մէջ աննախընթաց իրադարձութեամբ մը Պարպարա Յերիս անուով անկլիբան միաբանութեան պատկանող իգական մը դարձաւ եպիսկոպոս:
 1554 - Անգլիոյ Մերի Ա. թագուհիին հրամանով գահին յաւանորդուի 16-ամեայ Էլիզաբէթ Կրէյ մահապատիժի ենթարկուեցաւ Լոնտոնի մէջ:

Ծնունդներ
 1929 - Ալպերթ Վաղարշակի Ազարեան, մարմնամարզիկ, ԽՍՀՄ մարմնամարզի վաստակաւոր վարպետ, ՀԽՍՀ վաստակաւոր մարզիչ: Եղած է ողիմպիական խաղերու ատլետ:
 1818 - Մատաթիա (Անտոն) Գարազաշեան, պատմաբան: Զանդէ տեւած է փիլիսոփայութեան վերաբերեալ աշխատութիւններով:
 1886 - Մէյ Զիւտ, քրիստոնէայ, լիբանանա-պաղեստինցի բանաստեղծ, ակնարկագիր, թարգմանիչ: Եղած է 20-րդ դարու սկիզբի արաբական գրական ասպարէզի «Նահատ» մշակութային վերածնունդի առաջնային գործիչը:
 1972 - Սթիվ ՄաքՄանենըն, անգլիացի ֆութպոլիստ:
 1934 - Մանուէլ Ամբոնիո Նորիէկա Մորեո, Փանամայի ռազմական բռնապետ 1983-1989՝ մինչեւ Միացեալ Նահանգներու կողմէ Փանամա ներխուժումը:
 1956 - Վարդան Սրմաթեշ, հայ գործարար: 1999-էն «Արարատ» ֆութպոլային ակումբի համասեփականատէրն է: 2013-ին նշանակուեցաւ Մարտիի Զայաստանի Զանրապետութեան պատուոյ հիւպատոս:
 1954 - Արմեն Եսկարի Էլբակեան, դերասան, թատերական բեմադրիչ, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ, փրոֆեսոր:
Մահեր
 2012 - Ուիթնի Էլիզաբէթ Հիւսթըն, ամերիկացի երգչուհի, դերասանուհի, արտադրիչ: Յայտնի էր իր բարձր ձայնային յատկանիշներով եւ գայթակղային անձնական կեանքով:
 1650 - Ուրմէ Տեքաթ, ֆրանսացի փիլիսոփայ, մաթեմաթիքոս, բնագետ: Երբեմն կը նկատուի որպէս ժամանակակից փիլիսոփայութեան հայրը: Յայտնի է իր «Կը մտածեն, հետեւաբար գոյութիւն ունին» տեքարթեան հիմնադրոյթով:
 1971 - Սերոբէ Եղիկեան, հայ քիմիագետ: Տարաբանութեան եւ հիւլեագիտութեան մասին գրած է բազմաթիւ արժեքաւոր աշխատութիւններ, որոնցմէ հայերէն լոյս է տեսած է «Հիւլեական ռումբ» մենագրութիւնը:

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



Պէյրութ (թեթեւ անձրեւ) ցերեկը 14/11՝ գիշերը՝ 69% տամուկ

Երեւան (արեւոտ) ցերեկը 3/-9՝ գիշերը՝ 50% տամուկ

Չալկա (թեթեւ անձրեւ) ցերեկը 8/6՝ գիշերը՝ 81% տամուկ

Պանակոս (մասամբ ամպամած) ցերեկը 11/4՝ գիշերը՝ 63% տամուկ

Տուպայ (արեւոտ) ցերեկը 23/18՝ գիշերը՝ 56% տամուկ

Լոս Անճելըս (մասամբ ամպամած) ցերեկը 16/11՝ գիշերը՝ 52% տամուկ

Սիւոնի - վաղը (թեթեւ անձրեւ) ցերեկը 26/22՝ գիշերը՝ 71% տամուկ

Մոնթեվիդէո - (թեթեւ անձրեւ) ցերեկը 23/21՝ գիշերը՝ 81% տամուկ